

Saint Sarkis Armenian Apostolic Church



300 9th STREET
NIAGARA FALLS, N. Y. 14303

Phone: 282-2587

Ս. ՍԱՐԳԻՍ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԵԿԵՆԵՑԻ
ՆԻԱԿԱՐԱ ՖՈԼՍ

Ընդհ. Տնօրէն
Օր. Սիրան Բէլվէցեան
Նիւ Եորք, Ն. Ե. 10016

Յուլիս 11, 1978

Յարգելի Օր. Սիրան,

Այս նամակիս հետ կ'առաքեմ մեր (իմ եւ տիկնոջս) մշտական բնակութեան համար դիմումնագրերը: Ինչպէս հեռաձայնով Ձեզ ըսած էի, պիտի խնդրեմ որ երբ ստանաք զանոնք, կարելի եղածին շափ շուտ իմաց տաք Առաջնորդարանի փաստաբան Պրն. Է. Գաւազանճեանին, որպէսզի ինք պէտք եղածը ընելէ ետք ղրկէ Պրն. Եւջի Ներգաղթի գրասենեակը / Buffalo, Immigration & Naturalization Service / : Դիմումնագրերու կից ղրկած եմ նաեւ զանազան փաստաթուղթեր եւ երկուքական նկար: Բոլոր փաստաթուղթերը վավերացուցած եմ Պրն. Եւջի Ներգաղթի գրասենեակէն, կրկնօրինակներուն իսկականները / օրիժինալները / ցոյց տալով: Հարցարաններուն մէջ ոտտեղ որ չեմ կրցած հարկ եղածը գրել, պիտի խնդրեմ որ Պրն. Գաւազանճեանը լեցնէ:

Առիթէն օգտուելով ըսեմ որ դեռեւս ոչ մէկը չի հեռաձայնեց մեզ բժշկական ապահովագրութեան գրասենեակէն / MEDICAL - INSURANCE / : Դարձեալ պիտի խնդրենք որ այս ուղղութեամբ պէտք եղած կարգադրութիւնները ըլլան:

Առաջնորդարանի կողմէ եղած Հայերէն լեզուի շաբթուայ մը / Յուլիս 30 - Օգոստ. 5 / դասաւանդութեանց համար կարողացայ յարմար թեկնածու մը գտնել: Ուրեմն, Տիկ. Ալիս Աւտոյեանը, Նիակարա Ֆոլսի ծուխէն պիտի մասնակցի այդ օգտաշատ դասընթացներուն: Պիտի խնդրեմ որ այս ուղղութեամբ տեղեակ պահէք Օր. Սիլվա Տէր Ստեփանեանը որպէսզի պէտք եղած կարգադրութիւնները ըլլան Տիկ. Ալիս Աւտոյեանին համար:

Գաղութին աշխատանքները ընդհանրապէս լաւ կ'ընթանան: Արդէն սկսած ենք Հայոց լեզուի եւ Կիրակնօրեայ դպրոցի դասընթացներուն: Օգոստոսի 6 ին պիտի ունենանք մեր եկեղեցւոյ տարեկան դաշտահանդէսը: Իսկ Սեպտ. 23-24 ի համար նախապատրաստական աշխատանքներ կ'ը տանինք լաւագոյն ձեւով ընդունելու Առաջնորդ Սրբազան Հօր, ինչպէս նաեւ արժանավայել ձեւով նշելու Ս. Սարգիս եկեղեցւոյ հիմնադրութեան 25-ամեակը: Յոյսով ենք ու լաւատես որ գաղութը կամաց-կամաց պիտի աշխուժանայ ու վերակենդանանայ:

Ուրախ կ'ըլլամ մերթ ընդ մերթ լսելու Ձեր խորհուրդները: Լաւագոյն մաղթանքներով՝

Վաչէ սարկաւազ Նալպանտեան
Վաչէ սարկաւազ Նալպանտեան

Saint Sarkis Armenian Apostolic Church



300 9th STREET
NIAGARA FALLS, N. Y. 14303

Phone: 282-2587

**Ս. ՍԱՐԳԻՍ շԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԵԿԵՂԵՑԻ**

ՆԻԱԿԱՐԱ ՖՈԼՍ

Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմի Առաջնորդ
Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանին

Յուլիս 18, 1978

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Երկու օրեր առաջ, Պրն. Գաւազանճեանին փափաքին համաձայն,
իմ եւ տիկնոջս մշտական բնակութեան համար ըլլալիք դիմումագրերը առաքեցի ձեզ
Առաջնորդարան: Պրն. Գաւազանճեանը պէտք եղած լրացումները կատարելէ ետք, պիտի
ղրկէ Պրն. Սերգեյի Ներգաղթի գրասենեակը / Buffalo, Immigration & Naturalization Service / : Այս
առնչութեամբ օր. Սիրանին եւս անդրադարձալ, որպէսզի ինք եւս տեղեակ ըլլայ:

Սրբազան Հայր, Ձեր փափաքին համաձայն, երէկ, զրկեցի Ձեզ
մեր եկեղեցւոյ վերջին երկու ամսաթերթիկները, ինչպէս նաեւ մեր կիրակնօրեայ
պաշտամունքին ծրագիրը:

Ամառնային ուսմանս համար գացի եւ արձանագրուեցայ Նիւ-
կարա ֆոլսի Համալսարանին մէջ: Ամառուան միամսեայ շրջանին համար նախընտրեցի
հոգեբանութեան դասընթացներուն հետեւիլ: Դասերս կը սկսին Յուլիսի 24 ին եւ
կը լրանան Օգոստոսի 18 ին: Պէտք է ըսեմ որ ամէն օր է, եւ իւրաքանչիւր օր
երկու ժամ / առաւօտեան 8, 20 էն մինչեւ 10, 15 ը/ վստահ եմ որ այս կարճ շրջանի
յաճախումը մեծապէս պիտի օգնէ ինձ մասնաւորաբար առաջ տանելու իմ անգլերէն
լեզուի գիտութիւնը, ինչպէս նաեւ նախապատրաստելու տարեմուտի դասերուս:

Սրբազան Հայր, այժմ մէկ հարց կը մնայ ինծի, յստակօրէն
գիտնալու: Ամառնային դպրոցի ծախսըս, որ 250 տուար է, անձամբ ես պէտք է վճա-
ռեմ թէ՛ եկեղեցիս, կամ թէ՛ Առաջնորդարանը: Պէտք է ըսեմ որ վերոյիշեալ ծախսէն
զատ ունիմ նաեւ գիրքերուս եւ երթեւեկութեանս ծախսը: Այս առնչութեամբ պիտի
խնդրեմ որ լուսաբանէք զիս:

Այս առթիւ յարմար կը նկատեմ զրկելու Ձեզ ամառուան դպրո-
ցիս հաշուեցոյցը, որպէսզի բացայայտօրէն տեսնէք:

Կը սպասեմ Ձեր Հայրական խորհուրդներուն ու լուսաբանութիւնն-
երուն:

Մատչիմ Ձեր Ս. Աշոյն
Վաչէ Սրկ. Նալպանտեան
Վաչէ Սրկ. Նալպանտեան

Քիւ 25985
Յուլիս 19, 1978

Բարեշնորհ
Վաչէ Սրկ. Նալպանտեան
Հոգեւոր Մատակարար
Ս. Սարգիս Եկեղեցւոյ
Նիակարա ֆոլգ.

Սիրելի Վաչէ Սարկաւազ,

Առաջած ենք մեզի ուղղուած Յուլիս 18 եւ Օր. Սիրան Փալվեց-
եանի ուղղուած Յուլիս 11, 1978 թուակիր զոյգ նամակներդ, ինչ-
պէս նաեւ Եկեղեցւոյդ թերթիկներն ու կիրակնօրեայ պաշտամանց ժա-
մանակացոյցը:

Այս առթիւ կը փափաքինք մեր գնահատանքը արձանագրել կատարած
կանոնաւոր եւ հետեւողական աշխատանքիդ եւ գրութիւններուդ մէջ
գործածուած մարուր Հայերէն լեզուին համար: Սակայն մեզի համար
անհասկնալի մնաց՝ Հոգշ. Տ. Մեսրոպ Ե. Վրդ. Սէմէրմեանի մատու-
ցանելիք Ս. Գատարազի ծանուցման ներքեւը գրուած՝ Վարդապետ եւ
ծիական Խորհուրդ՝ քացատրութիւնը:

Դիմումնագիրերդ առացուած են եւ շուտով պիտի փոխանցուին
Տիար Գաւազանմեանի՝ որպէս զի անհրաժեշտ կարգադրութիւնները ը-
նէ:

Ներփակ կը գանես 300 --երեք հարիւր-- տուարի փոխգիր մը՝
հոգալու համար ամառնային դասընթացքներուդ ծախքերը:

Էնզի եւ աիկնոջդ կը ցանկանք առաւել քաջաոգջութիւն եւ
եկեղեցանուէր գործերուդ յարասեւութիւն եւ յաջողութիւն:

Սիրոյ ողջունելի

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈԳՈՍ
Առաջնորդ